ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1965 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

Երիտասարդ Թուրքերի կառավարության կողմից 1915 թ. կազմակերպված հայկական կոտորածներին էր նվիրված Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի ապրիլի 20-ի միացյալ գիտական նստաշրջանը։

Բացելով նստաշրջանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանն իր ներածական խոսքում նշավակեց պանիսլամիզմի և պանթյուրքիզմի ցնորամիտ գաղափարներով զառանցող երիտասարդ Թուրքերի կառավարող կլիկին, որը մարդկության պատմության մեջ կատարեց աննախընթաց մի ոճրագործություն՝ բնաջնջելով և իր հնամենի հայրենիքից վտարելով խաղաղ և ստեղծագործ մի ժողովուրդ։

Նախապես մշակված ծրագրով,—ասաց ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը,—սկզբում ոչնչացնելով դիմադրողունակ տղամարդ բնակչությանը, այնուհետև հայ մտավորականությանը, Երիտթուրքերի կառավարությունը բնաջնջեց ավելի քան մեկկեկես միլիոն հայ, նրանց մի շնչին մասին տարագրեց դեպի Միջագետքի ավազուտները՝ ամայացնելով Արևմտյան Հայաստանը։ Թուրքական կառավարությունը մտադրվել էր ոչնչացնել սաև մեր ժողովրդի արևելյան հատվածը։ Սակայն այդ մտադրությունը ձախողվեց շնորհիվ Լենինի և Մեծ հոկտեմբերի։

Մեկընդմիշտ կապելով իր բախտը սովետական իշխանության, հզորացող Ռուսաստանի և կոմունիզմի գաղափարների հետ, շնորհիվ Սովետական Միության բոլոր ժողովուրդների և առաջին հերթին ռուս ժողովրդի օգնության, մեր ստեղծարար ժողովուրդը հոգևոր ու նյութական խոշոր արժեքներ ստեղծեց և Սովետական Հայաստանը դարձրեց ծաղկուն հանրապետություն։

Այնուհետև նստաշրջանում կարդացվեցին մի շարք զեկուցումներ։ «Հայ ժողովրդի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ և միջազգային իմպերիալիզմը» զեկուցումով հանդես եկավ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ենգիբարյանը։ Հենվելով վավերագրային փաստերի վրա, նա հիմնավորեց, որ 1915—16 թթ. հայկական կոտորածներն արդյունք էին պետական քաղաքականության աստիճանի բարձրացված երիտթուրք ազգայնամոլների կանխամտածված նողկալի ծրագրի՝ դյուրացնելու համար պանիսլամական և պանթյուրքական իրենց մտադրությունները։ Զեկուցողը միաժամանակ նշեց, որ հայկական եղեռնի մեջ մեծապես հանցավոր է միջազգային իմպերիալիզմի և առաջին հերթին վիլհելմյան Գերմանիայի նամոլ քաղաքականությունը, որն իր շահերին անխնա կերպով զոհ բերեց հնագույն մշակույթի տեր մի ժողովրդի մեծագույն հատվածը։

Հիսուն տարի առաջ կատարված ողբերգությունը ծանր կորուստներ պատճառեց հայկական մշակույթին։ Զգալով գրկել հայ ժողովրդին դիմադրություն կազմակերպելու ամեն մի հնարավորությունից, երիտթուրքերի կառավարող նոյակը առաջին հերթին հաշվեհարդար տեսավ արևմտահայ մտավորականության հետ, ոչնչացնելով ավելի քան հազար գործիչների։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Մկրյանի զեկուցումը նվիրված էր 1915 թ. զոհված հայ գրողներին՝ Գրիգոր Զոհրապին, Դանիել Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբեն Սևակին, Ռուբեն Զարդարյանին, Թլկատինցուն, Տիգրան Չալքուշյանին, Արտաշես Հարությունյանին և այլոց, որոնք իրենց ստեղծագործական գործունեության ծաղկման շրջանում զոհ գնացին երիտթուրքերի արյունոտ յաթաղանին։

Սակայն ամենուր չէր, որ երիտթուրք ոճրագործներին հաջողվեց դյուրությամբ հաշվեհարդար տեսնել հայ ժողովրդի հետ։ Վանում, Շատախում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռան վրա հայերը ինքնապաշտպանության դուրս եկան և օրհասական գոպարի բռնվեցին թվապես և զինական ուժերով անհամեմատ գերակշռող թուրքական բանակների և կրոնական մոլեռանդությամբ կուրացած խաժամուժի դեմ, շատ դեպքերում գիտենալով հանդերձ, որ չունեն փրկության նշույլ իսկ։ Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ հերոսամարտերի մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Ստեփանյանը։

Զեկուցելով «Եղեռնի պատմության նենգափոխումը Թուրքական պատմագրության մեջ» թեմայի շուրջը, պատմական գիտությունների դոկտոր Ե. Սարգսյանը և պատմական գիտությունների թեկնածու Ռ. Սահակյանը ցույց տվեցին, թե ինչպիսի նենգ ճիգերի է դիմում Թուրքական պատմագրությունը հայկական եղեռնի հարցում մեղավոր հանելու իրեն՝ հայ ժողովրդին։ Այդ նպատակով նրանք աղավաղում են պատմական իրականությունը, ժխտում, որ հայկական կոտորածները 1915 թ. կանխագծված էին Թուրքական կառավարող շրջանների կողմից։

«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և հայ ժողովրդի վերածնունդը» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գալոյանը։ Նա ցույց տվեց, թե ինչպիսի ծանր և եղերական իրադրություն ստեղծվեց հայ ժողովրդի համար առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին, երբ մեր արևմտահայ հատվածի բնաջնջումից հետո ոչնչացման դամոկլյան սուրը կախված էր նաև հայ ժողովրդի արևելյան հատվածի վրա։ Եվ այն ժամանակ, երբ մեր ժողովուրդը գրեթե հասել էր անկման ու անհետացման խորախոր անդունդի եզրին, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ նա բարոյական, զինական և նյութական օժանդակություն ստացավ Սովետական Ռուսաստանից, տնտեսական ու քաղաքական դաշինքի մեջ մտավ վերջինիս հետ, դառնալով սոցիալիստական նորոգ աշխարհի կառուցման առաջամարտիկներից մեկը։ Զեկուցողը մի շարք վկայություններ բերեց արևմտյան հեղինակներից, որոնք ստիպված էին խոստովանելու, որ Արևմտյան տերությունները հայ ժողովրդին սոսկ աղետներ պատճառեցին։

Անցնելով դարերի բովով, հերոսական պայքար մղելով իր ազգային ու սոցիալական ազատագրման համար, հայ ժողովուրդը շատ գառնություններ տեսավ, անթիվ ու անհամար զոհեր տվեց, որոնց բոլորի հիշատակը մենք միշտ սրբությամբ կպահենք, իսկ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի շնորհիվ վերածնված Սովետական Հայաստանը նրանց հիշատակը հավերժացնող մեծագույն կոթողն է։

Պատմական գիտությունների թեկնածու Կ. Ուղումյանը «Ժողովուրդների լենինյան բարեկամության անհաղթ ուժը» զեկուցմամբ ցույց տվեց, որ Վ. Ի. Լենինի ձեռքով դարբնված և բազմաթիվ փորձություններից հաղթանակով գուրս եկած սովետական ժողովուրդների բարեկամությունը այն ուժն է, որն ապահովում է ռեսպուբլիկայի հսկայաքայլ առաջընթացը դեպի հանուր մարդկության երազած գալիք կոմունիստական աշխարհը։

Գիտական նստաշրջանն ամփոփելով, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հրանտ Բատիկյանն ասաց, որ հայ ժողովրդի բազում վերքերը բուժվեցին շնորհիվ Մեծ հոկտեմբերի, կոմունիստական պարտիայի քաղաքականության, որը և վերածնեց մեր ժողովրդի ստեղծագործ ոգին, կերտեց նրա հոյակապ գալիքը։

Վ. Դ.